ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«21» սեպտեմբերի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի հայրենակիցներ, սիրելի համաքաղաքացիներ

Այսօր նշվում է Հայաստանի Հանրապետության անկախության տոնը:

33 տարի առաջ՝ 1991թ. սեպտեմբերի 21-ին, հայ ժողովուրդը միասնական որոշում կայացրեց՝ հանրապետական հանրաքվեին քվեարկելով Հայաստանի Հանրապետության անկախության օգտին:

Միասնական պայքարի շնորհիվ կատարվեց հայ ժողովրդի դարավոր երազանքը:

Հայաստանում վերականգնվեց հայ ժողովրդի գերագույն արժեքը՝ Անկախությունը:

Անկախությունը մեր ազգի հարատևման, անվտանգության ապահովման, զարգացման ու բարեկեցիկ կյանքի կերտման անկյունաքարային գրավականն է, որին յուրաքանչյուրս մեր տեղում պարտավոր ենք հոգատարությամբ ու սրտացավորեն վերաբերվել:

Միաբանություն և խոհեմություն, պետությանն ու պետականությանը սատարելու համառ կամք և անխոցելի հայրենասիրություն. ահա այն արժեքները, որոնք մեզ պետք են անկախության պահպանման ճանապարհին:

Մեր պատմությունը չունի գոնե մեկ սերունդ, որն այդ անկախության ու լինելիության կռիվը չի տվել:

Երախտագիտության և խոնարհումի խոսքեր եմ ուզում ասել հայրենիքի համար կյանքը չխնայած քաջորդիների հիշատակին:

Սահմանին կանգնած մեր զինվորներին մաղթում եմ ուժ ու համբերություն:

Բարին բոլորիս հետ, խաղաղություն մեր հայրենիքին, հավերժություն մեր անկախությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ